ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/2-1»

ք. Երևան «25» հունվարի 2018թ.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ա. Տանանյան-ի, որը գործում է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յասոն» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Տ. Խուրշուդյանի, որը գործում է «Յասոն» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 2355360 (Երկու միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[3]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ք. Երևան, Ֆանարջյան 76 շ.	«Յասոն» ՍՊԸ
<<Արդշինբանկ >> ՓԲԸ Արաբկիր մ/ճ	ք. Երևան, Վրացական 16
Հ/Հ 2471202012460000	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ01002804	Հ/h 1510002226470100
էլ. հասցեն՝ nco.gnumner@gmail.com	ՀՎՀՀ 02540338
հեռ. 010-28-77-92	էլ. հասցեն՝ yason@web.am
	հեռ. 010-23-54-87
/ստորագրություն/	/ստորագրություն/
Տ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
«25» հունվարի 2018թ. կնքված
ՈՒԱԿ-ԳՀԱՇՁԲ-18/2-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգման (CPV)	տեխնիկական նկարագրություն		չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
		անվանումը	բնութագիրը					հասցեն	ժամկետը**
1	79821180	Ծրար ռենտգեն բաժանմունքի 26*32	Ծրար ռենտգեն բաժանմունքի 26*32 սմ, 120գ.մ/ք, օֆսեթ փակվելու հնարավորությամբ, դիմային մասում տպագրված	հատ	49.8	99600	2000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
2	79821180	Ծրար ռենտգեն բաժանմունքի 32*42	Ծրար ռենտգեն բաժանմունքի 32*42 սմ, 120գ.մ/ք, օֆսեթ փակվելու հնարավորությամբ, դիմային մասում տպագրված	հատ	64.8	64800	1000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
3	79821180	Ծրար ռենտգեն բաժանմունքի 410մմx470	Ծրար ռենտգեն բաժանմունքի: Ներկտրված ձեռքի ամուր բռնակի տեղով: Արտաքին մակերեսները տպագրված գունավոր (4+4), անվանումով և արտաքին տեսքը պարունակող դիզայներական լուծումով : Նմուշը համապատասխանեցնել պատվիրատուի հետ: Չափերը՝ 410մմx470մմ, Օֆսեթ տպագրություն: Թուղթը՝ 350 գր. Ֆուտորոտ :	հատ	268.5	1074000	4000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
4	79821180	Համարակալված ամբուլատոր դրամարկղի մուտքի ձև 1 օրդեր	Համարակալված ամբուլատոր դրամարկղի մուտքի ձև 1 օրդեր, A5 օֆսեթ, 70գ.մ/ք, 1+0	հատ	2.028	101400	50000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
5	79821180	Համարակալված դրամարկղի մուտքի ձև 1 օրդեր	Համարակալված դրամարկղի մուտքի ձև 1 օրդեր, A5 օֆսեթ, 70գ.մ/ք, 1+0	հատ	2.025	16200	8000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
6	79821180	Դիսպանսեր քարտ	Դիսպանսեր քարտ, A5 օֆսեթ, 70գ.մ/ք, 1+1	հատ	2.028	20280	10000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
8	79821180	Անեսթեզիոլոգի թերթիկ	Անեսթեզիոլոգի թերթիկ, A5 օֆսեթ, 70գ.մ/ք, 1+1	հատ	2.2	6600	3000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
11	79821180	Հոսպիտալացման ուղեգիր	Հոսպիտալացման ուղեգիր A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	2.028	20280	10000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
12	79821180	Գիտակցված կամավոր համաձայնության թերթիկ	Գիտակցված կամավոր համաձայնության թերթիկ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	4.05	48600	12000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
13	79821180	Նշանակման թերթիկ	Նշանակման թերթիկ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	4.08	40800	10000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
14	79821180	ԷՍԳ-ի ձևաթղթ	ԷՍԳ-ի ձևաթղթ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	4.061538462	52800	13000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը

16	79821180	Արյան բիոքիմիական քննության թերթիկ	Արյան բիոքիմիական քննության թերթիկ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 4+0	հատ	4.05	97200	24000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
17	79821180	Արյան բիոքիմիական քննության թերթիկ	Արյան բիոքիմիական քննության թերթիկ A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	2.03	24360	12000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
19	79821180	Մեզի ընդհանուր քննության թերթիկ	Մեզի ընդհանուր քննության թերթիկ A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	2.03	24360	12000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
20	79821180	Ցիտոլոգիական հետազոտության թերթիկ	Ցիտոլոգիական հետազոտության թերթիկ A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	2.04	20400	10000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
21	79821180	Շարժի թերթիկ	Շարժի թերթիկ A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	2	12000	6000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
22	79821180	Տեղեկանք հիվանդի	Տեղեկանք հիվանդի A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	2.1	8400	4000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
23	79821180	Ձև 001	Ձև 001 A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	4.08	20400	5000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
24	79821180	Էպիկրիզ	Էպիկրիզ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	4.125	33000	8000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
25	79821180	Վիճակագրական քարտ Ձև 066/v	Վիճակագրական քարտ Ձև 066/v A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	2.28	11400	5000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
27	79821180	Կոնսուլտացիոն թերթիկ	Կոնսուլտացիոն թերթիկ A5 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	2.028	20280	10000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
37	79821180	Ամբուլատոր գործիքային հետազոտությունների ուղեգիր վճարովի	Ամբուլատոր գործիքային հետազոտությունների ուղեգիր վճարովի, արտատպվող A5*2 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	8.928	446400	50000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
38	79821180	Ամբուլատոր հետազոտությունների ուղեգիր բիոքիմիկան լաբորատորիայի	Ամբուլատոր հետազոտությունների ուղեգիր բիոքիմիկան լաբորատորիայի, արտատպվող A5*2 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	9.6	19200	2000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
39	79821180	Ամբուլատոր հետազոտությունների ուղեգիր իմունոլոգիական լաբորատորիայի	Ամբուլատոր հետազոտությունների ուղեգիր իմունոլոգիական լաբորատորիայի, արտատպվող A5*2 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	9.6	19200	2000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
40	79821180	Ամբուլատոր հետազոտությունների ուղեգիր կլինիկական լաբորատորիայի	Ամբուլատոր հետազոտությունների ուղեգիր կլինիկական լաբորատորիայի, արտատպվող A5*2 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	9.6	19200	2000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
44	79821180	Ուղեգիր հավելված 17	Ուղեգիր հավելված 17, A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	3	6000	2000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը

60	79821180	Բիոքիմիկան լաբորատորիայի թերթիկ	Բիոքիմիկան լաբորատորիայի թերթիկ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+1	հատ	4.8	14400	3000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
72	79821180	Անասթեզիոլոգիի նախավիրահատական զննման թերթիկ	Անասթեզիոլոգիի նախավիրահատական զննման թերթիկ A4 օֆսեթ, խտությունը 70գ. մ/ք, 1+0	հատ	4.6	13800	3000	տես սույն հավելվածի ծանոթությունը	տես սույն հավելվածի ծանոթությունը
ԸՆԴԱՄԵՆԸ					X	2355360	X	X	

Մատակարարման հասցեն է՝ ք. Երևան Ֆանարջյան 76շ. <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ: Աշխատանքների կատարումը և դրանց մատակարարումը Կատարողի կողմից իրականացվում է սույն Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալու պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի պատվիրված քանակին և տեսակին համապատասխան: Աշխատանքների կատարման և մատակարարման համար պատվերը Պատվիրատուի կողմից Կատարողին կատարվում է բանավոր, կամ գրավոր ձևով Պայմանագրում նշված Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեից պատվերը ուղարկելով Կատարողի էլեկտրոնային փոստի հասցեին: Չևաթղթերի նմուշները տրամադրում է պատվիրատուն:

* աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:
** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ք. Երևան, Ֆանարջյան 76 շ.
<<Արդշինբանկ >> ՓԲԸ Արաբկիր մ/հ
Հ/Հ 2471202012460000
ԲՎՀՀ01002804
էլ. հասցեն՝ nco.gnumner@gmail.com
հեռ. 010-28-77-92

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ք. Երևան, Վրացական 16
,Արարատբանկ ԲԲԸ
Հ/հ 1510002226470100
ԲՎՀՀ 02540338
էլ. հասցեն՝ yason@web.am
հեռ. 010-23-54-87

/ստորագրություն/
Կ.Տ